ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 փետրվարի 2024 թվականի N 40 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2024 թվականի հունվարի 10-ի N 7-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 21-ին կայացած նիստի N 4 արձանագրությունը

ո ր ո շ ում եմ.

1. Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից 49 /քառասունինը/ քաղաքացիների՝ սոցիալական աջակցության նպատակով հատկացնել միանվագ դրամական օգնություն ընդհանուր 2 960 000 /երկու միլիոն ինը հարյուր վաթսուն հազար/ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարների վճարումը:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024թ. փետրվարի 21
ք.Իջևան